/

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԷՆՄԳ ՇՀԱՊՁԲ 15/8 - 95-16**

ք. Երևան <<06>> << 09>> 2016թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Ա. Շահնազարյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և **<<Լանս>> ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Հ. Գրիգորյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի մատակարարումը** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

**2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**3.2 Գնորդը պարտավոր է՝**

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

**3.3 Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմամգիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

**3.4 Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործընթացում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 11 854 800 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2016թ. :

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու հաջորդող օրվանից հաշված տեխնիկական բնութագրում նշված ժամկետը, իսկ եթե ապրանքատեսակի համար տեխնիկական բնութագրում նշված չէ ժամկետ, ապա երաշխիքային ժամկետ է սահմանվում ապրանքատեսակը ընդունելու հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

**9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

---------------------------- **Ա.Շահնազարյան**

(ստորագրություն)

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Լանս» ՍՊԸ**

Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 193004670454
ՀՎՀՀ՝ 00019333

---------------------------- **Հ. Գրիգորյան**

(ստորագրություն)

**Կ.Տ.**

Հավելված N 1

<<01 >> <<09>> 2016թ. կնքված

N ՀՀ ԷՆՄՍԳ ԾՀԱՊՁԲ 15/8 95-16 ծածկագրով գնման պայմանագրի

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Չափա-բաժին N | Ապրանքի անվանումը | Ապրանքի հատկանիշերը |
|---|---|---|
| | | |
| 5. | Հիշասալիկ | **Dell 16 GB 2Rx4 RDIMM 1600MHz LV**<br>Դելլ 16 ԳԲ 2Արx8 ԱրԴիԱյԷմԷմ 1600 ԷմՀԶ ԷլՎի |

| Tech Specs<br>Տեխնիկական հատկանիշները | |
|---|---|
| **Manufacturer Part#**<br>Արտադրող համար | |
| **Dell Part#**<br>Դելի համարը | |
| **Product Type**<br>Արտադրանքի տեսակը | **RAM memory**<br>ՌԱՄ հիշողություն |
| **Capacity**<br>Տարողունակությունը | **16 GB**<br>16 ԳԲ |
| **Memory Type**<br>Հիշողությունը տեսակը | **DDR3L SDRAM - DIMM 240-pin**<br>ԴիԴիԱր3Էլ ԷսԴիԱրէյԷմ-ԴիԱյԷմԷմ 240-փին |
| **Upgrade Type**<br>Թարմացման տեսակը | **System specific**<br>Հատուկ համակարգ |
| **Data Integrity Check**<br>Տվյալների ամբողջականությունը, ստուգեք | **ECC**<br>ԻՍԻՍի |
| **Speed**<br>Արագությունը | **1600 MHz ( PC3-12800 )**<br>1600 ՄՀզ (ՓիՍի3-12800) |
| **Features** | **Dual rank, Low Voltage, registered**<br>Կրկնակի շարք, ցածր վոլտ, գրանցված |

| | | | |
|---|---|---|---|
| | | Հատկություն-ներ | |
| | | **This product is compatible with**<br>Արտադրանքը համատեղելի է | **Dell PowerEdge R620**<br>Դելլ Փոերէյջ Ար620 |
| | | **Տեղադրումը մատակարարի կողմից** | |
| 6. | **Սերվերային սարքերի կոմպլեկտ** 1 | **Հիշասալիկ (16gb 1600 MHz) և պրոցեսոր Dell PowerEdge R620 սերվերի համար** | |

| | |
|---|---|
| **Dell 16 GB 2Rx4 RDIMM 1600MHz LV**<br>Դելլ 16 ԳԲ 2Արx8 ԱրԴիԱյԷմԷմ 1600 ԷմՀՁ ԷլՎի | |
| Tech Specs<br>Տեխնիկական հատկանիշները | |
| **Manufacturer Part#**<br>Արտադրող համար | |
| **Dell Part#**<br>Դելի համարը | |
| **Product Type**<br>Արտադրանքի տեսակը | **RAM memory**<br>ՌԱՄ հիշողություն |
| **Capacity**<br>Տարողու-նակությունը | **16 GB**<br>16 ԳԲ |
| **Memory Type**<br>Հիշողությունը տեսակը | **DDR3L SDRAM - DIMM 240-pin**<br>ԴիԴիԱր3Էլ էսԴիԱրէյէմ-ԴիԱյԷմԷմ 240-փին |
| **Upgrade Type**<br>Թարմացման տեսակը | **System specific**<br>Հատուկ համակարգ |
| **Data Integrity Check**<br>Տվյալների ամբողջականությունը, ստուգեք | **ECC**<br>ԻՍԻՍի |
| **Speed**<br>Արագությունը | **1600 MHz ( PC3-12800 )**<br>1600 ՄՀզ (ՓիՍի3-12800) |
| **Features**<br>Հատկություն-ներ | **Dual rank, Low Voltage, registered**<br>Կրկնակի շարք, ցածր վոլտ, գրանցված |
| **This product is compatible with**<br>Արտադրանքը համատեղելի է | **Dell PowerEdge R620**<br>Դելլ Փոերէյջ Ար620 |

**DELL CPU KIT INTEL XEON 6 CORE PROCESSOR E5-2640 2.50GHZ 15MB CACHE 7.2 GT/S QPI TDP 95W FOR DELL POWEREDGE R620 կամ համարժեքը**
Դելլ ՍԻՓԻՅՈՒ ՔԻԹ ԻՆԹԵԼ ՔՍԵՈՆ ՔՈՐ ՓՐՈՑԵՍՈՐ Ի-2640 2.50 ԳՀՁ 15 ՄԲ ՔԱՇԵ 7.2 ԳՏ/ԷՍ ՔՅՈՒ ՓԻԱՅ ԹԻԴԻՓԻ 95 Վ ՓՈԵՐ ԵՅՁ ԱՐ 620-ի համար

| | |
|---|---|
| **MANUFACTURER**<br>Արտադրողը | **DELL / INTEL**<br>ԴԵԼԼ/ ԻՆԹԵԼ |
| **PART NUMBER**<br>Մասի համարը | **R620 E5-2640**<br>ԱՐ 620 Ի5-2640 |
| **CPU FREQUENCY** | **2.50GHZ** |

| | | |
|---|---|---|
| | | <table><tr><td>ՍԻՓԻՅՈՒ ՖՐԻՔՈՒԵՆՍԻ</td><td>2.50</td></tr><tr><td>**MULTI-CORE**<br>ՄՈՒԼԹԻ-ՔՈՐ</td><td>**6-CORE**<br>6- քոր</td></tr><tr><td>**CACHE**<br>Քեշ</td><td>**15MB**<br>15 ՄԲ</td></tr><tr><td>**COMPATIBLE WITH**<br>ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ</td><td>**DELL POWEREDGE R620**<br>ԴԵԼԼ ՓՈՒԵՐԵՅՋ ԱՐ620</td></tr><tr><td>**THERMAL DESIGN**<br>ՋԵՐՄԱՅԻՆ ԴԻԶԱՅՆ</td><td>**95W**<br>95Վ</td></tr><tr><td>**KIT INCLUDES**<br>Կոմպլեկտը ներառում է</td><td>**(1) CPU (1) HEATSINK**<br>(1) ՍԻՓԻՅՈՒ (1) ջերմափոխանակիչ</td></tr></table>**Տեղադրումը մատակարարի կողմից** |
| 7. | **Սերվերային սարքերի կոմպլեկտ 2** | **Dell 16 GB 2Rx4 RDIMM 1600MHz LV**<br>Դելլ 16 ԳԲ 2Արx8 ԱրԴիԱյէմէմ 1600 էմՀՋ էլՎի<table><tr><td colspan="2">**Dell 16 GB 2Rx4 RDIMM 1600MHz LV**<br>Դելլ 16 ԳԲ 2Արx8 ԱրԴիԱյէմէմ 1600 էմՀՋ էլՎի</td></tr><tr><td colspan="2">Tech Specs<br>Տեխնիկական հատկանիշները</td></tr><tr><td>**Manufacturer Part#**<br>Արտադրող համար</td><td></td></tr><tr><td>**Dell Part#**<br>Դելի համարը</td><td></td></tr><tr><td>**Product Type**<br>Արտադրանքի տեսակը</td><td>**RAM memory**<br>ՌԱՄ հիշողություն</td></tr><tr><td>**Capacity**<br>Տարողու-նակությունը</td><td>**16 GB**<br>16 ԳԲ</td></tr><tr><td>**Memory Type**<br>Հիշողությունը տեսակը</td><td>**DDR3L SDRAM - DIMM 240-pin**<br>ԴիԴիԱր3էլ էսԴիԱրէյէմ-ԴիԱյէմէմ 240-փին</td></tr><tr><td>**Upgrade Type**<br>Թարմացման տեսակը</td><td>**System specific**<br>Հատուկ համակարգ</td></tr><tr><td>**Data Integrity Check**<br>Տվյալների ամբողջականությունը, ստուգեք</td><td>**ECC**<br>ԻՍԻՍի</td></tr><tr><td>**Speed**<br>Արագությունը</td><td>**1600 MHz ( PC3-12800 )**<br>1600 ՄՀզ (ՓիՍի3-12800)</td></tr><tr><td>**Features**<br>Հատկություն-ներ</td><td>**Dual rank, Low Voltage, registered**<br>Կրկնակի շարք, ցածր վոլտ, գրանցված</td></tr><tr><td>**This product is compatible with**<br>Արտադրանքը համատեղելի է</td><td>**Dell PowerEdge R620**<br>Դելլ Փոերէյջ Ար620</td></tr></table><table><tr><td>**DELL CPU KIT INTEL XEON 6 CORE PROCESSOR E5-2620 2.00GHZ**</td></tr></table> |

**15MB CACHE 7.2 GT/S QPI TDP 95W FOR DELL POWEREDGE T620**

ԴԵԼԼ ՍԻՓԻՅՈՒ ՔԻԹ ԻՆԹԵԼ ՔՍԵՈՆ 6 ՔՍԵՈՆ 6 ՔՈՐ ՊՐՈՑԵՍՈՐ Ի5-2620 2.00ԳՀՁ 15 ՄԲ ՔԵՇ 7.2 ԳՏ/ԷՍ ՔՅՈՒՓԻԱՅ ԹԻԴԻՓԻ 95 ԴԱԼԲՅՈՒ ԹԻ620

| | |
|---|---|
| **MANUFACTURER**<br>Արտադրող | **DELL / INTEL**<br>ԴԵԼԼ/ԻՆԹԵԼ |
| **PART NUMBER**<br>ՓԱՐԹ ՀԱՄԱՐԸ | **T620 E5-2620**<br>Թի 20 Ի5-2620 |
| **CPU FREQUENCY**<br>ՍԻՓԻՅՈՒ ՀՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | **2.00GHZ**<br>2.00ԳՀՁ |
| **MULTI-CORE**<br>Բազմաշերտ | **6-CORE**<br>6-շերտ |
| **CACHE**<br>Քեշ | **15MB**<br>15 ՄԲ |
| **COMPATIBLE WITH**<br>Համատեղելի | **DELL POWEREDGE T620**<br>Դելլ փոերէջ Թի 620 |
| **THERMAL DESIGN**<br>Թերմալ Դիզայն | **95W**<br>95 Վատ |
| **KIT INCLUDES**<br>Կոմպլեկտը ներառում է | (1) **CPU (1) HEATSINK**<br>(1) ՍԻՓԻՅՈՒ (1) ջերմափոխանակիչ |

**Տեղադրումը մատակարարի կողմից**

| | | |
|---|---|---|
| 19. | **Համակարգիչ 1** | **Համակարգիչ Lenovo ThinkCentre M900z 23" All-in-One Desktop (Non Touch) կամ համարժեքը**<br>Լենովո Ֆինքսենթեր էմ900զետ 23" Ամբողջը էկրանին (ոչ հպումով) |

| | |
|---|---|
| **Model**<br>Մոդել | **ThinkCentre M900z**<br>Ֆինքսենթեր էմ900զեթ |
| **Part number**<br>Սարքավորման համար | **10F3CTO1WW**<br>10էֆ3ՍիԹիO1ԴաբլյուԴաբլյու |
| **Processor**<br>Պրոցեսոր | **Intel Core i5-6600 Processor (6M Cache, up to 3.90 GHz)**<br>Ինթել Քոր այ5-6600 Պրոցեսոր (6էմ Քեշ, մինչև 3.9 ԳՀզ) |
| **Operating System**<br>Օպերացիոն համակարգ | **Windows 10 Pro 64**<br>Ուինդոուս 10 Փրո 64 |
| **Operating System Language**<br>Օպերացիոն համակարգի լեզուն | **Windows 10 Pro 64 – English**<br>Ուինդոուս 10 Փրո 64 անգլերեն |
| **Office Productivity Software**<br>Գրասենյակի արտադրողականության ծրագրեր | **Microsoft Office Home and Business 2016**<br>Մայքրոսոֆթ օֆֆիսե հոմե և բիզնեսս 2016 |
| **Form Factor**<br>Ֆակտորի ձևը | **85% Power 150W**<br>85% Սնուցում 150Վ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Display<br>Էկրան | All-in-One 23.8" FHD (1920 x 1080) 16:9<br><br>Բոլորը մեկում 23.8" ԷՖԷՅՁԴԻ (1920 x 1080) 16:9 | |
| | | Camera / Microphone<br>Տեսախցիկ/խոսափող | Camera and Mic<br>Տեսախցիկ/խոսափող | |
| | | System Stand<br>Համակարգ սթենդ | Flex Stand 23.8" (Transformer)<br>Ֆլեքս Սթենդ 23.8˝ թրանսֆորմեր | |
| | | Total Memory<br>Ընդհանուր հիշողությունը | 8GB DDR4 2133 SoDIMM<br>8ԳԲ ԴԻԴԻԱՐ4 2133 ԷսօԴԻԱՅԷՄԷՄ | |
| | | Video Adapter<br>Տեսադապտեր | Integrated Graphic Card<br>Ինտեգրացված գրաֆիկական քարտ | |
| | | First Graphic Dongle<br>Առաջին գրաֆիկական Պաշտպանիչ շերտ | DP to DVI<br><br>ԴիՓի մինչև ԴԻՎԻԱՅ | |
| | | Hard Drive<br><br>Կոշտ սկավառակ | 500GB HD 7200RPM 2.5" SATA3<br><br>500ԳԲ էյչԴի 7200էռՓիԷմ 2.5" ՍԱՏԱ3 | |
| | | Optical Device<br>Օպտիկական սարք | Slim DVD Rambo<br>Բարակ ԴԻՎԻԴԻ Ռեմբո | |
| | | Keyboard<br><br>Ստեղնաշար | Lenovo USB Edge Keyboard Black - English<br>Լենովո ՅՈՒԷՍԲԻ ամբողջ չափ սև - Անգլերեն | |
| | | Mouse<br>Մուկ | USB Optical Mouse Black<br>ՅՈՒԷՍԲԻ օպտիկական մուկ Սև | |
| | | Publications Pack<br>Տպագրությունը տուփ | Publication English<br><br>Տպագրությունը անգլերեն | |
| | | Warranty<br>Երաշխիքային սպասարկում | 1 Year<br>1 Տարի | |
| | | Connectors<br>Միացումներ<br>**Side**<br>Կողք<br>**2 x USB 3.0 Ports (one always-on fast charge USB)**<br>2xՅՈՒԷՍԲԻ 3.0 Փորտեր (մեկը միշտ-արագ լիցքավորման ՅՈՒԷՍԲԻ)<br>**Headphone and Microphone Combo Port**<br>Ականջակալ և բարձրախոսի քոմբո փորտ<br>**Rear**<br>Թիկունք<br>**4 x USB 3.0 Ports**<br>4 x ՅՈՒԷՍԲԻ 3.0 փորթերով<br>**DisplayPort™ In and Out Combo**<br>Դիսփլեյփորթ և դուրս փոմբո<br>**AC-in**<br>ԷյՍի-ում | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | **RJ45 LAN Connector**<br>ԱրՋեյ45 Լեն միակցիչ | |
| | | Արտադրողի հավաստման թերթ (MAF) | |
| **20.** | **Համակարգիչ 2** | **Համակարգիչ Lenovo ThinkCentre M900 – Tiny**<br>Լենովո Ֆինքսենթեր էմ900-թայնի | |
| | | **Model**<br>Մոդել | **ThinkCentre M900 – Tiny**<br>Ֆինքսենթեր էմ900-թայնի |
| | | **Part number**<br>Սարքավորման համար | **10FMCTO1WW**<br>10էֆէմՍիԹիՕ1ԴաբլյուԴաբլյու |
| | | **Processor**<br>Պրոցեսոր | **Intel Core i5-6500T 2.5G 4C**<br>Ինթել Քոր այ5-6500Թի 2.5Ջի 4Սի |
| | | **Operating System**<br>Օպերացիոն համակարգ | **Windows 10 Pro 64**<br>Ուինդոուս 10 Փրո 64 |
| | | **Operating System Language**<br>Օպերացիոն համակարգի լեզուն | **Windows 10 Pro 64 – English**<br>Ուինդոուս 10 Փրո 64 անգլերեն |
| | | **Office Productivity Software**<br>Գրասենյակի արտադրողականության ծրագրեր | **Microsoft Office Home and Business 2016**<br>Մայքրոսֆթ օֆֆիսե հոմե և բիզնեսս 2016 |
| | | **Form Factor**<br>Ֆակտորի ձևը | **Tiny Q170**<br>Փոքրիկ Քյու170 |
| | | **Total Memory**<br>Ընդհանուր հիշողությունը | **12GB(4+8) DDR4 2133 SoDIMM**<br>12ԳԲ (4+8) ԴԻԴԻԱՐ4 2133 էսօԴԻԱՅԷՄԷՄ |
| | | **Video Adapter**<br>Տեսաադապտեր | **Integrated Graphic Card**<br>Ինտեգրացված գրաֆիկական քարտ |
| | | **First Graphic Dongle**<br>Առաջին գրաֆիկական | **DP to DVI**<br>ԴիՓի մինչև ԴԻՎԻԱՅ |
| | | **Audio Adapter**<br>Աուդիո ադապտեր | **Integrated Audio**<br>Ինտեգրացված աուդիո |
| | | **Hard Drive**<br>Կոշտ սկավառակ | **256GB SSD, 2.5", SATA3, OPAL2.0 – Capable**<br>256ԳԲ էսէսԴի, 2.5", ՍԱՏԱ3, ՕՊԱԼ 2.0 |
| | | **Networking**<br>Ցանցային | **Integrated Intel Gigabit Ethernet**<br>Ինտեգրացված Ինթել Գիգաբիթ էդերնեթ |
| | | **WiFi Wireless LAN Adapters**<br>ՈւայՖայ անլար Ցանցային ադապտերներ | **Intel 8260+BT 2x2ac Tiny vPro**<br>Ինտել 8260+ԲիԹԻ 2x2էյսի Թինի վՊրո |
| | | **Keyboard** | **USB Fullsize Keyboard Black – English** |

| | | | |
|---|---|---|---|
| | | Ստեղնաշար | ՅՈՒԷՍԲԻ ամբողջ չափի սև - Անգլերեն |
| | | **Mouse**<br>Մուկ | **USB Optical Mouse Black**<br>ՅՈՒԷՍԲԻ օպտիկական մուկ Սև |
| | | **Vertical Stand**<br>Ուղղահայաց տակդիր | **Vertical Stand Tiny**<br>Ուղղահայաց տակդիր Թայնի |
| | | **Speakers**<br>Բարձրախոսներ | **Internal Speaker Tiny**<br>Ներքին բարձրախոս Թայնի |
| | | **Publications Pack**<br>Տպագրությունը տուփ | **Publication English**<br>Տպագրությունը անգլերեն |
| | | **Warranty**<br>Երաշխիքային սպասարկում | **1 Year**<br>1 Տարի |
| | | **Additionally**<br>Հավելյալ | |
| | | **Monitor accessories**<br>Մոնիտորի աքսեսուար | **ThinkCentre Tiny Under Desk Mount Bracket**<br>**Ֆինք սենթր թինի անդեր դեսկ մռունք բրեքեթ** |
| | | **Monitor**<br>Մոնիտոր | **ThinkVision E2323 Wide 23" FHD WLED Backlit LCD Monitor**<br>Թինքվիսիոն Ի2323 լայն 23" |
| | | **Standard on the M900 Tiny:**<br>Ստանդարտները ԷՄ900 Թայնի համակարգչի | |
| | | **Form Factor**<br>Ֆակտորի ձևը | **Tiny 1L Desktop**<br>Փոքրիկ 1 էլ Դեսքթոփ |
| | | **Weight**<br>Քաշը | **Starting at 1.3 lbs (0.6kg)**<br>Տկսված 0.6կգ-ից |
| | | **Dimensions (H x W x D)**<br>Չափերը (բxլxխ) | **7.20" x 7.05" x 1.36" (179mm x 183mm x 34.5mm)**<br>7.20" x 7.05" x 1.36" (179մմ x 183մմ x 34.5մմ) |
| | | **Ports**<br>Պորտերը | **6 USB 3.0 (one fast charge), DP+ DP, Punch Out (VGA/HDMI/DP/Serial), LAN, Audio**<br>6 ՅՈՒԷՍԲԻ 3.0 (մեկ արագ լիցքավորում), ԴիՓի+ԴիՓի, ԼԱՆ, Աուդիո |
| | | Արտադրողի հավաստման թերթ (MAF) | |
| 21. | Ավտոմատ սնուցման սարք | **APC Smart-UPS X 3000VA Rack/Tower LCD 200-240V with Network Card**<br>ԷՅՓԻՍԻ Սմարթ-ՅՈՒՓԻԷՍ ԻՔՍ 3000ՎԻԷՅ Ռաք/Թոուեր ԷլՍիԴի 200-240Վ, Ցանցային քարտի հետ | |
| | | **Производитель**<br>Արտադրող | **APC**<br>ԷՅՓԻՍԻ |
| | | **Модель**<br>Մոդել | **SMX3000RMHV2UNC**<br>ԷՍԷՄԻՔՍ3000ԱՐԷՄՎԻ2ՅՈՒԷՆՍԻ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | **Высота аппаратурной стойки**<br>Աշտարակի բարձրությունը | **2U**<br>2 ՅՈՒ | |
| | | **Максимальная выходная мощность**<br>Առավելագույն ելքային հզորությունը | **2700 Ватт / 3000 ВА**<br>2700Վատ/3000Վոլտ | |
| | | **Максимальное задаваемое значение мощности**<br><br>Առավելագույն տրվող հզորության նշանակությունը | **2700 Ватт / 3000 ВА**<br><br>2700Վատ/3000Վոլտ | |
| | | **Номинальное выходное напряжение**<br>Ելքային լարում | **230V**<br>230Վ | |
| | | **Искажения формы выходного напряжения**<br>Ելքային լարման աղավաղում | **Менее 5%**<br><br>Ավելի քիչ 5% | |
| | | **Выходная частота (синхронизированная с электросетью)**<br><br>Ելքային հաճախականություն | **50/60Hz +/- 3 Hz**<br><br>50/60Հզ +/- 3 Հզ | |
| | | **Другие выходные напряжения**<br>Այլ ելքային լարումներ | **208, 220, 240**<br>208, 220, 240 | |
| | | **Топология**<br>Տոպոլոգիա | **линейно-интерактивный**<br>Գծային ինտերակտիվ | |
| | | **Тип формы напряжения**<br>Լարման ձևի տեսակը | **Синусоидальный сигнал**<br>Սինուսոիդային ազդանշան | |
| | | **Выходные соединения**<br>Ելքային միացումներ | **(8) IEC 320 C13**<br>(8) ԱՅԻՍԻ 320 ՍԻ13<br>**(8) IEC 320 C13**<br>(8) ԱՅԻՍԻ 320 ՍԻ13<br>**(1) IEC 320 C19**<br>(1) ԱՅԻՍԻ 320 ՍԻ19<br>**(2) IEC Jumpers**<br>(2) ԱՅԻՍԻ ցատկող | |
| | | **Номинальное входное напряжение**<br>Ազգային մուտքային լարում | **208V, 230V**<br>208Վ, 230Վ | |
| | | **Входная частота**<br>Մուտքային հաճախականություն | **50/60 Гц +/- 3 Гц (автоматическое определение)**<br>50/60Հց+/-3 Հց<br>(ավտոմատ սահմանում) | |
| | | **Тип входного соединения** | **British BS1363A**<br>**IEC-320 C20**<br>**Schuko CEE 7/EU1-16P**<br>Սչուկո ՍԻԻԻ 7/ԻՅՈՒ1-16ՓԻ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | Մուտքային միացման տեսակը | Բրիտանական ԲիԷս1363Էյ ԱՅԻՍԻ-320 ՍԻ20 | |
| | | **Длина шнура**<br>Լարի երկարությունը | **2.44 метра**<br>2.44 մ | |
| | | **Диапазон входного напряжения при работе от сети**<br>Մուտքային լարման շարքը ցանցում աշխատելու ժամանակ | **140 - 280В**<br><br>140-280Բի | |
| | | **Другие значения входного напряжения**<br>Այլ նշանակությունները մուտքային լարման | **220, 240**<br><br>220,240 | |
| | | **Время переключения**<br>Փոխարկիչի ժամանակը | **2-4 ms**<br>2-4 մվ | |
| | | **Интерфейсный порт**<br>Ինտերֆեսային պորտ | **Разъем SmartSlot**<br>Մուտքը Սմարթսլոթ | |
| | | **Предварительно установленные платы SmartSlot™**<br>Նախապես ներդրված պլատաներ Սմարթսլոթ | **AP9631**<br><br>ԷՅՓԻ9631 | |
| | | **Цвет:**<br>Գույնը | **Черный**<br>Սև | |
| | | **Стандартная гарантия**<br>Ստանդարտ երաշխիքը | **3-летняя гарантия, ремонт или замена (кроме батареи); гарантия на батарею 2 года, дополнительные абонементы на продление гарантии, предлагаются дополнительные абонементы на гарантийное обслуживание с** выездом на место<br>3 տարվա երաշխիք, վերանորոգում կամ փոխարինում(բացառութ-յամբ մարտկոցները), երաշխիքը մարտկոցի վրա 2 տարի, լրացուցիչ աբոնիմենտներ երկարաձգման համար, առաջարկվում է լրացուցիչ աբոնիմենտներ | |
| | | **Комплект поставки**<br>Մատակարարման հավաքածու | • **направляющие для монтажа в аппаратурные стойки**<br>• Մոնտաժման համար տեղափոխվող սարքավորումների աշտարակ<br>• **сигнальный кабель RS-232 для Smart UPS**<br>• ազդանշանային մալուխԱՐԷՍ-232 Սմարթի համար ՅՈՒՓԻԷՍ<br>• **датчик температуры** | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | • Ջերմաստիճանի տվիչ<br>• **руководство пользователя**<br>• Օգտագործողի ուղեցույց<br>• **плата администрирования Web/SNMP Management Card**<br>• Ղեկավարման քարտ |
| | **Մատակարարումը պետք է իրականացվի Կառավարական 3 շենք 225 սենյակ հասցով** | | |

**ԳՆՈՐԴ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

------------------------- **Ա.Ծ[illegible]ազարյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**«Լանս» ՍՊԸ**

Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 193004670454
ՀՎՀՀ՝ 00019333

------------------------- **Հ. Գրիգորյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2

<<01>> << 09> 2016թ. կնքված

*N ՀՀ ԷՆՄԱԳ ՇՀԱՊՁԲ 15/8-35-16 ծածկագրով գնման պայմանագրի*

## ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Չափաբաժին Հ/Հ | Ապրանքի | | | Նախատեսվում է գնել 2016թ. | | | | | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | | | |
| | Անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | Քանակը | գինը | Քանակը | գինը | Քանակը | գինը | Քանակը | գինը | Քանակը | գինը |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 5. | Հիշասալիկ 1 | հատ | 112800 | | | | | | | 7 | 789600 | 7 | 789600 |
| 6. | Սերվերային սարքերի կոմպլեկտ 1 | հատ | 382800 | | | | | | | 2 | 765600 | 2 | 765600 |
| 7. | Սերվերային սարքերի կոմպլեկտ 2 | հատ | 292800 | | | | | | | 2 | 585600 | 2 | 585600 |
| 19. | Համակարգիչ 1 | հատ | 768000 | | | | | | | 10 | 7680000 | 10 | 7680000 |
| 20. | Համակարգիչ 2 | հատ | 732000 | | | | | | | 1 | 732000 | 1 | 732000 |
| 21. | Ավտոմատ սնուցման սարք | հատ | 1302000 | | | | | | | 1 | 1302000 | 1 | 1302000 |
| | Ընդամենը՝ | X | | X | | X | | X | | 23 | 11854800 | | 11854800 |

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 900013010013,
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 02505983

------------------- [illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Լանս» ՍՊԸ**

Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 193004670454
ՀՎՀՀ՝ 00019333

------------------- Լ. Գրիգորյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3

<<01>> <<09>> 2016թ. կնքված

*N ՀՀ ԷՆՄՍԳ ՇՀԱՊՁԲ 15/8 ծածկագրով գնման պայմանագրի*
95-16

# ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԵՎ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՄԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ապրանքի անվանումը | Տնտեսագիտական դասակարգում | Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. արտաբյուջեից՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 5. | Հիշասալիկ 1 | 5122 | | | | | | | | | | 789600 | 789600 | 789600 | 789600 |
| 6. | Սերվերային սարքերի կոմպլեկտ 1 | 5122 | | | | | | | | | | 765600 | 765600 | 765600 | 765600 |
| 7. | Սերվերային սարքերի կոմպլեկտ 2 | 5122 | | | | | | | | | | 585600 | 585600 | 585600 | 585600 |
| 19. | Համակարգիչ 1 | 5122 | | | | | | | | | | 7680000 | 7680000 | 7680000 | 7680000 |
| 20. | Համակարգիչ 2 | 5122 | | | | | | | | | | 732000 | 732000 | 732000 | 732000 |
| 21. | Ավտոմատ սնուցման սարք | 5122 | | | | | | | | | | 1302000 | 1302000 | 1302000 | 1302000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

**ԳՆՈՐԴ**

**ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Հ/Հ՝ 9000130[illegible]
ՀՀ ՖՆ [illegible]
գործառնական վարչություն
ՀՎՀՀ՝ 025[illegible]

----------------- [illegible]
(ստորագրություն)
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

**«Լանս» ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 49
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1930046704054
ՀՎՀՀ՝ 00019333

------------------------- **Հ. Գրիգորյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 4

<<01 >> <<09>> 2016 թ. կնքված

N ՀՀ ԷՆՄՍԳ ՇՀԱՊՁԲ 15/895 -16 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ ______________________

______________________________

հվհհ ___________________

Պատվիրատու

______________________________

______________________________

գտնվելու վայրը ______________

հհ______________________

______________________________

հվհհ___________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________________________

________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն՝ ի դեմս _______________________________________________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս__________________________________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

______________________________

ստորագրություն

______________________________

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 4.1

<< 6 >> << 09 >> 2016թ. կնքված

N *ՀՀ ԷՆՄԱԳ ՇՀԱՊՁԲ 15/8* *ծածկագրով գնման պայմանագրի* 95-16

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ -----------------------------ի (այսուհետ՝ Գնորդ) և

(Գնորդի անունը)

-------------------------------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ------------

(Վաճառողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| **Անվանումը** | **Քանակական ցուցանիշը (փաստացի)** | **Չափի միավորը** |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց** |
|---|---|
| | հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
| _______________ | _______________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| _______________ | _______________ |
| ստորագրություն | ստորագրություն |